Հավելված
ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապ
համայնքի ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 21-ի N 32 –Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող «Նոր Խաչակապ համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» կողմից
Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Սուրիկ Տոռոզյանի կողմից
Հաստատվել է՝ համայնքի ավագանու դեկտեմբերի 21-ի թիվ 32 -Ն որոշմամբ

գ. ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....
2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....
3.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ.....
4.ՀՀՋԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....
5.ՀՀՋԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....

1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԶԾ)մշակելիս հաշվի է առնվել,որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի,ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով,և 210-րդ հոդվածի,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ծրագիր:

ՀՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները,ինչպես նաև Լոռու մարզպետի կողմից ներկայացված համայնքի զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀՀԶԾն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Նոր Խաչակապ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային(մարդկային,գույքային,ֆինանսատնտեսական,տեխնիկական և այլ) հնարավորություններով,համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությամբ: ՀՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության,նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը,համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն առկա հնարավորությունները,տնտեսության զարգացման հնարավորությունները,արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա,ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից,համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և Նոր Խաչակապ համայնքի ավագանու հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀՀԶԾ-ն,որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ.ՀՀԶԾ-ում ներառված են Նոր Խաչակապ համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման(լրացման) մասին դրույթներ,շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ,աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ,համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ:ՀՀԶԾ-ն ներառում է նաև Նոր Խաչակապ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Նոր Խաչակապ համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման,Նոր Խաչակապի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է,որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ԽՄ-ը, փաստաթուղթը մշակելիս,հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործուղության մեջ դրված ՀՀ ռազմավարական,մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների,քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Նոր Խաչակապ համայնքը գտնվում է Լոռու մարզի հյուսիս-արևմտյան մասում:Մարզկենտրոն Վանաձորից գտնվում է 15կմ հեռավորության վրա: Հարևան է Ղուսալի և Քարաձոր համայնքներին: Համայնքի տարածքով հոսում է Փամբակ գետը: Կլիման չոր ցամաքային է, ցուրտ՝ սակավաձյուն,պարզկա ձմեռներով ու շոգ չորային ամառներով: Հաճախակի են գարնանային վարար անձրևները,որոնց հետևանքով մեծանում են կարկտահարությունները,ձմռան ցուրտը: Համայնքը շրջապատված է անտառներով, չնայած՝ սկսած 90-ականներից անտառները նահանջել են:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2954.77 հա, որից վարելահողեր՝ 323.03 հա, խոտհարք՝ 72.46 հա,արոտավայր՝ 1910.15 հա և այլն:

Նոր Խաչակապ գյուղը հիմնադրվել է 1991-ական թվականներին: Սկզբնական շրջանում գյուղը եղել է ադրբեջանաբնակ: 1988թվականին գյուղը վերջնականապես բնակեցվեց հայերով:

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները.

Հ/Հ	Ցուցանիշները	Մշտական
1	Համայնքի բնակչության թվաքանակը,մարդ	634
	այդ թվում՝	
1.1	արական	312
1.2	իգական	322
2	Տնային տնտեսությունների թվաքանակը	200
2.1	Այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում/վագոն, տնակ/բնակվող	20
2.2	Կիսակառույց տներում բնակվող	0

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները.

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը,այդ թվում՝	618	322	296
	մինչև 1 տարեկան	3	2	1
	1-2 տարեկան	15	8	7
	3-4 տարեկան	13	6	7
	5-6 տարեկան	15	6	9
	7-10 տարեկան	22	11	11
	11-14 տարեկան	22	10	12
	15-17 տարեկան	26	10	16
	18-22 տարեկան	44	24	20
	23-45 տարեկան	243	132	111
	46-62 տարեկան	136	67	69
	63 և ավելի տարեկան	79	46	33
2.	Կենսաթոշակառուներ	88	49	39
3.	Հաշմանդամներ	28	17	11
4.	Հաշմանդամ երեխաներ	0	0	0
5.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	2	0	2
6.	Փախստականներ	1	0	1

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ավագանին՝ 5 անդամով:

Համայնքապետարանը ունի վարչական շենք,որը գտնվում է համայնքի վերջնամասում: Համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 5 աշխատակիցներից՝ հետևյալ կառուցվածքով.

1.Համայնքի ղեկավար-1
2.Համայնքի ղեկավարի տեղակալ-1
3.Աշխատակազմի քարտուղար-1
4.Աշխատակազմի առաջատար մասնագետ-1
5.Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ-1

Նոր Խաչակապ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 21-Ն որոշմամբ հաստատված 2016 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է 14790.8 հազար դրամ, ծախսերի գծով՝ 14790.9 հազար դրամ:

Նոր Խաչակապ համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 22-ի թիվ 01-Ն որոշմամբ 2016 թվականի բյուջեն (ճշտված բյուջե) եկամտային մասով կազմել է 14922.6 հազար դրամ, ծախսերի գծով՝ 16543.5 հազար դրամ: 2016թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 26.1 %՝ 3848.6 հազար դրամ:

Համայնքի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն ու անասնապահությունն է:

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակաբույսեր՝ ցորեն,գարի և այլ կուլտուրաներ:Տնամերձ հողամասերում աճեցնում են բանջարաբոստանային կուլտուրաներ, սակայն ոռոգման ջրի ցանցի բացակայության պատճառով համայնքի բնակիչները մեծ եկամուտներ չեն ստանում:

Համայնքի բնակիչները զբաղվում են նաև անասնապահութ-

յամբ,սակայն ֆերմերային տնտեսություններ չկա: Հիմնակա-
նում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում
է իր տնտեսության ներսում:

Համայնքում առկա անասնագլխաքանակի վերաբերյալ տվյալ-
ներն ներկայացված են աղյուսակ 3 -ում:

Աղյուսակ 3.

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը
1	Խոշոր եղջերավոր անասուններ,որից	205
	Կովեր	70
2	Խոզեր	74
3	Հավեր և /կամ/այլ թռչուններ	657
4	Մեղվաընտանիք/փեթակներով/	116

Նոր Խաչակապ համայնքում Ռոսիա ռեստորանի մոտ
գտնվում է պատմամշակութային նշանակություն ունեցող հայ
ռուսական բարեկամության հուշարձանը:

Կրթական համակարգը ներառում է 1 միջնակարգ դպրոց:
Դպրոցը կառուցվել է 1993թ.-ին, 2009 թ.-ին կապիտալ վերանո-
րոգվել է: Դպրոցը նախատեսված է 185 հոգու համար, համա-
լրված է մասնագետ կադրերով,աշակերտների թիվը կազմում է
54,իսկ աշխատողներինը՝ 24, որից ուսուցիչ՝ 16: Դպրոցը ունի
գործող ջեռուցման համակարգ,չունի լոկալ կոյուղի:

Շրջանավարտները ուսումը շարունակում են հիմնականում
Վանաձորի,ինչպես նաև հանրապետության այլ բուհերում ու
կրթօջախներում:

Դպրոցի ամենամեծ հիմնախնդիրը սպորտդահլիճի անա-
վարտ շինարարության ավարտումն է:

Նոր Խաչակապ համայնքում գործում է մեկ բուժկետ, որը
գտնվում է համայնքապետարանի շենքում,նախատեսված է
1 աշխատողի համար և ունի բոլոր պայմանները բնակչությանը
առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար: Բուժկետն ունի
մեկ աշխատող,որը տեղի բնակիչ է:

Ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված են 38
տնային տնտեսություն:

Աննկարագրելի ցածր է բնակչության սոցիալական վիճակը: Հիմնական զբաղմունքը՝ գյուղատնտեսությունը,անասնաբուծությունը անեկամտաբեր է: Բարձր է գործազրկությունը, գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով: Ցածր է զբաղվածության տոկոսը: Վարձատրվող աշխատանքով ապահովված են 27 մարդ,հիմնականում կրթության,տեղական ինքնակառավարման մարմիններում, սպասարկման ոլորտում:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Նոր Խաչակապ համայնքում գալիք 2017-2021թթ. ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության,միջազգային կազմակերպությունների,մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների հետ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում, ինչը ենթադրում է օրինակ պարարտանյութերի,սերմացուների տրամադրում, գյուղտեխնիկայի ձեռքբերման հնարավորությունների ստեղծում, խորհրդատվության տրամադրում և այլ միջոցառումների կազմակերպում.
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում,համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում,կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

Պլանավորվող հինգ տարիների ընթացքում նախատեսվում է համագործակցել քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների հետ:

Նոր Խաչակապ համայնքում առկա համագործակցության շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

- Փողոցային լուսավորության աշխատանքների ավարտ
- Խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի վերանորոգում
- Ոռոգման ջրի համակարգի կառուցում
- Դպրոցի սպորտդահլիճի կառուցում
- Աղբահանության կազմակերպում
- Գյուղտեխնիկայի ձեռքբերում

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի բյուջեի մուտքերը,կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի,տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին:

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում,ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Աղյուսակ 4. Համայնքի 2015-2016 թթ.բյուջեի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների ֆինանսական կանխատեսումները

(հազար դրամ)

Եկամտի և ծախսի տեսակը	2015թ. փաստացի	2016թ. փաստացի	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
Ընդամենը եկամուտներ	14711.8	14717.8	14630.4	14155.2	13178.0	14467.0	14722.8
Հարկային եկամուտներ,որից	14711.8	14717.8	14630.4	14155.2	13178.0	14467.0	14722.8
Հողի հարկ	1433.5	1393.4	1393.4	1350.0	1350.0	1350.0	1393.4
Գույքահարկ	1147.6	1146.8	1146.8	904.0	904.0	1256.8	1146.8
Տեղական տուրքեր	118.0	41.0	36.0	36.0	24.0	48.0	48.0
Պաշտոնական դրամաշնորհներ	10585.2	10664.2	10664.2	10664.2	9800.0	10600.1	10664.2
Այլ եկամուտներ	1427.5	1472.4	1390.0	1201.0	1100.0	1212.1	1470.4

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր							
Տարեսկզբի ազատ մնացորդ	1218.9	1620.9	1530.1	1410.0	1300.0	1561.0	1471.2
Ընդամենը ծախսեր	15930.7	16338.7	16216.7	15000.0	13803.0	13084.0	12219.0
Ընթացիկ ծախսեր,այդ թվում	14711.8	14717.8	13506.0	12490.0	11403	11084.0	10319
Տեղ. ինքնա-կառ.մարմնի աշխ աշխատավարձ	8824.0	9651.0	9651.0	8924.0	8102.0	7979.0	7500.0
Ապրանքն գնման և ծառ. վճ. ծախս	2128.0	2303.0	2181.0	2101.0	2001.0	1910.0	1819.0
Սուբսիդիաներ							
Դրամաշնորհներ							
Սոցիալական նպաստներ	900.0	1200.0	1200.0	1100.0	1000.0	900.0	800.0
Այլ ծախսեր		474.7	474.7	365.0	300.0	295.0	200.0
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր,այդ թվում	3373.2	2710.0	2710.0	2510.0	2400.0	2000.0	1900.0
Հիմնական միջոցներ	3373.2	2710.0	2710.0	2510.0	2400.0	2000.0	1900.0

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքի զարգացման առկա դժվարությունները ըստ ուղղությունների ներկայացված են ստորև.

1. Համայնքի խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության ցածր մակարդակը.
2. Համայնքի կառուցապատումը,բարեկարգումը և կանաչապատումը,համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը.
3. Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստելը, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացումը.
4. Ոռոգման ջրի համակարգի կառուցման անհրաժեշտությունը.
5. Դաշտավարության բնագավառում գյուղտեխնիկայի ձեռքբերման անհրաժեշտությունը:

Վերը նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի,հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- Համայնքը մոտ է Վանաձոր և Սպիտակ քաղաքներին, միջպետական երկաթգծին.
- Համայնքի տարածքը գազաֆիկացված է.
-Համայնքում առկա է հեռախոսակապը,հասանելի է բջջային կապի 3 օպերատոր.
-Զարգացման համար համայնքն ունի բավարար մասնագիտական ներուժ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- Ոռոգման ջրի համակարգի բացակայությունը
- Աշխատատեղերի պակասը
- Դպրոցի սպորտդահլիճի կառուցումը
-Գյուղտեխնիկայի բացակայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- Աշխատուժի առկայությունը
- ԱՆասնապահության զարգացումը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- Գործազրկության մակարդակի աճը
- Արտագաղթը,հատկապես երիտասարդների շրջանում:

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Նոր Խաչակապի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը,որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական զարգացումը:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության,քաղաքացիական հասարակության, գործարարների համատեղ գործունեությունը,ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5 -ում:

Աղյուսակ 5 . Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին(արտահայտված տոկոսով)	25	23	20	18	16
2	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	0.5	0.7	0.8	1.0	1.5
3	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը(չպայմանավորված բնական աճով)	1%	1.5%	1.7%	2%	2.5%

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակ-ներն են՝

Համայնքում հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները,համայնքը դարձնել բարեկեցիկ:

-Համայնքի ղեկավարի իրավասության շրջանակներում միջոցներ ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների իրավունքներն ու շահերը.
- Համայնքում իրականացնել բարեկարգման և կանաչապատման ընդգրկուն աշխատանքներ, կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը.
- Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը.
- Ապահովել կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպումը.
- Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը.
- Խթանել գյուղատնտեսության զարգացումը.
-Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:

Առաջիկա 5 տարիների համայնքի հիմնական ծրագրերը նախատեսված են ծրագրերի անձնագրերում:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 1

«Համայնքի փողոցների լուսավորում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Միջոցներ հայթհայթել փողոցային լուսավորության աշխատանքների իրականացման ավարտի համար						
Ծրագրի անմիջական նպատակ Ունենալ արտաքին լուսավորությունով ապահովված,անվտանգ փողոցներ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Ապահովել բնակչությանը անվտանգ և լուսավոր փողոց-ներով	1. Լուսավորությունից օգտվող բնակչության թիվը(մարդ)						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	100	100	100	100	150
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1.Մրցույթի հայտարարություն 2. Պայմանագրի կնքում 3. Աշխատանքի կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 13 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 13 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2016-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի բոլոր բնակելի թաղամասերում փողոցային լուսավորության աշխատանքների իրականացման ավարտ						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 2

«Խմելու ջրի ցանցի վերանորոգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Միջոցներ հայթհայթել խմելու ջրի ցանցի վերանորոգման աշխատանքների իրականացման համար						
Ծրագրի անմիջական նպատակ Համայնքի ջրագծի վերանորոգման աշխատանքներ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Համայնքի բնակչությանը շուրջօրյա ջրամատակարարման ապահովումն է	1. Հին խողովակների փոխարինում (մ)						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		300	500	500	500	0	0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1.Պայմանագրի կնքում 2. Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 2մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 5մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2016-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Վատ վիճակում է գտնվում խմելու ջրի ջրամատակարարման համակարգը և մոտակա տարիներին չվերանորոգելու արդյունքում համայնքը կկանգնի բարդ խնդրի առաջ						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 3

«Ոռոգման ջրի համակարգի կառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Միջոցներ հայթհայթել ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքների իրականացման համար						
Ծրագրի անմիջական նպատակ Համայնքում գյուղատնտեսության կարևորագույն խնդիրներից մեկի լուծում և գյուղատնտեսության զարգացում	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Գյուղատնտեսության զարգացում	1. Գյուղատնտեսության զարգացում (%)						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	10	25	50	70	100
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1.Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպության փնտրում 2. Համայնքի ներդրում 3. Պայմանագրի կնքում 4. Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 35մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 35մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ոռոգման ջրի համակարգի առկայությունը կնպաստի համայնքում գյուղատնտեսության զարգացմանը						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 4

«Դպրոցի սպորտդահլիճի կառուցում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Միջոցներ հայթհայթել դպրոցի սպորտդահլիճի կառուցման աշխատանքների իրականացման համար						
Ծրագրի անմիջական նպատակ Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Համայնքում սպորտի զարգացում	1. Նոր աշխատատեղերի ստեղծում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	1	1	1
	2. Սպորտով զբաղվող երեխաների թիվը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	20	30	50
Ծրագրի հիմնական գործողությունները	1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպության փնտրում 2. Համայնքի ներդրում 3. Պայմանագրի կնքում 4. Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 60մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 70 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Սպորտդահլիճի կառուցման արդյունքում այն կնպաստի Նոր Խաչակապ համայնքում սպորտի զարգացմանը						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 5

«Աղբահանության կազմակերպում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Միջոցներ հայթհայթել համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման համար						
Ծրագրի անմիջական նպատակ Ունենալ մաքուր,բարեկարգ համայնք							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Մաքուր,կանաչ տարածքներով համայնք	1. Նոր աշխատեղերի ստեղծում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			2	3	3	3	3
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1.Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպության փնտրում 2. Համայնքի ներդրում 3. Պայմանագրի կնքում 4. Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 1.9մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 6.6.8մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դոնոր կազմակերպություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կնպաստեն համայնքը մաքուր,բարեկարգ և կանաչապատ դարձնելու համար						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 6

«Գյուղտեխնիկայի ձեռքբերում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Միջոցներ հայթհայթել գյուղտեխնիկա ձեռք բերելու համար						
Ծրագրի անմիջական նպատակ Գյուղտեխնիկայի ձեռքբերում							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ գյուղատնտեսության զարգացում	1. Գյուղատնտեսության զարգացում (%)						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	20	30	30	30	30
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1.Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպության փնտրում 2. Համայնքի ներդրում 3.Պայմանագրի կնքում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 60 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 60մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դոնոր կազմակերպություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2018թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում գյուղտեխնիկայի ձեռք բերումը կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը						

4.ՀՀԶԾ ֆինանսավորում

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում , ՀՀ ԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Նոր Խաչակապ համայնքի ՀՀԶԾ-ի ֆինանսավորումն ամփոփված է Աղյուսակ 6-ում:

5. ՀՀԶԾ մոնիթորինգ

ՀՀԶԾ ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրքանչյուր տարին մեկ անգամ:

ՀՀԶԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Աղյուսակ 7-ում ներկայացված է ՀՀԶԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

Համայնքի ղեկավար՝ Ս.Տոուզյան